Համբարձման տոն Թբիլիսիում

HAYARTUN

Մայիսի 20-ին, կիրակնօրյա պատարագից հետո, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու բակում, հանդիսավորությամբ նշվեց Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու «Հայարտուն» մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ, եւ կազմակերպչական հարցերով պատասխանատու Նարինե Ղուշչյանի ջանքերով, քրիստոնեական խորհուրդ ունեցող Համբարձման տոնը վերածվեց ժողովրդական տոնահանդեսի:

Կիրակնօրյա պատարագի եկած հավատացյալները չէին շտապում տուն վերադառնալ: Նրանց հետաքրքրության պատճառը բակում պտտվող   գույնզգույն ծաղկեպսակներով աղջիկների եւ ջահել հարսների աշխուժությունն էր, սպիտակ շորերով հրեշտակները, ազգային տարազով տղաներն ու աղջիկները - ամեն ինչ ճիշտ այնպես, ինչպես նկարագրել է Մեծ Լոռեցին իր «Անուշ» պոեմում:

1 / 2

[illegible]